

Յաւելու ած «ՄՈՒՐՃ» ամսագրի

ԶԵՍՏՈ ՄՈՐԻԿՐ

# ՀԱՅԻ ԲԱՐԱՎՅԻ ԱՐԿԱՆՆԵՐԸ

Պ Ա Ր Ս Կ Ա Ս Տ Ա Ն Ո Ւ

ՎՀալ պարսկական կեանքից

Թարգմ. անգլ. բնագրից Մ. և.  
(Նոր-Ջուղայեցի)

Տ Փ Խ Ա Ա

Արագատիս Ա. Քութելթելաձէի, Կիկ. № 21  
1904

---

Дозволено цензурою. Тифісъ, 5 января 1904

---

# ՀԱՅԻ ԲԱՐԱՅԻ ԱՐԿԱՆԵՐԸ ՊԱՐԱԿԱՏԱՆՈՒՄ

ԳԼ. ա.

Հաջի Բարայի ծնունդը,—Նրա կրթութիւնը:

Հայրս՝ քէրբէլէի Հասանը, Սպահանի յայտնի սափրիչներից մէկն էր: Տասն և եօթը տարեկան հասակում նա ամուսնացել էր մի մոմավաճառի աղջկայ հետ. սակայն նրա ամուսնութիւնը չէր պսակուել բախտով, որովհետեւ նրա կինը ամուսնելով՝ հօրս աչքից ընկել էր:

Հօրս հմտութիւնն ու ճարպիկութիւնը ածելիի գործածութեան մէջ շահել էր իր համար այնքան մեծ անուն և այնքան շատ մուշտարիներ, մասնաւորապէս վաճառական դաստկարգից, որ քսան տարուայ աշխատանքից յետոյ նրան յաջողել էր մի երկրորդ կին ևս առնել, ամուսնալով մի հարուստ սեղանաւորի աղջկայ հետ:

Իր առաջին կնոջ նախանձից ու թախանձանքներից ազատուելու և իր երկրորդ աներոջ մօտ հաճելի և արժանաւոր երեալու դիտաւորութեամբ հայրս մտածեց Քէրբէլա գնալուխտ կատարելու հոսէյնի գերեզմանի վրայ: Նա իր հետ տարաւ միայն իր երկրորդ կնոջ, որը ճանապարհին աշխարհ բերեց ինձ:

Քէրբէլա գնալուց առաջ հայրս Սպահանում յայտնի էր միայն սափրիչ Հասան անունով, բայց այնտեղից վերադառնալուց յետոյ նա յարգում էր Քէրբէլայի տիտղոսով, իսկ ես՝ ի պատիւ մօրս կոչուեցի հաջի—մի անուն, որ անբաժան մնաց ինձանից և ինձ համար մեծ յարգանք շահեց: Ես իսկապէս արժանի չէի այդ անունն ու յարգանքը վայելելու, որովհետեւ հաջի տիտղոսը կամ պատանունը տրւում է միմիայն

Նրանց, որոնք բախտ են ունենում ուխտ կատարելու Մէքկայի օրհնեալ Մարգարէի Գերեզմանի վրայ:

Երբ հայրս Քէրէլալից վերադարձաւ, նա վերսկսեց իր սափրիչութիւնը և գործեց աւելի մեծ եռանդով, քան առաջները: Իրեւ մի բախտաւոր և բարեպաշտ մուսուլմանի՝ հօրս շատ յարգում ու համակրում էին Սպահանի բոլոր կրօնաւորներն ու վաճառականները:

Հայրս ցանկանում էր որ ես սափրիչ դառնայի. ուստի նա բաւական համարեց հազիւ այնքան կրթութիւն տալ ինձ, որ կարողանայի վարժ կարդալ և կրկնել իմ աղօթքները: Մի մոլլա, որ հօրս խանութիւ մօտ մի փոքրիկ դպրոց էր պահում, և որին հայրս շաբաթական մի անգամ ձրիապէս սափրում էր, հաճեցաւ ընդունել ինձ իր դպրոցում: Նա այնքան լուրջ ուշադրութիւն դարձրեց իմ ուսման վրայ, որ երկու տարուայ ընթացքում ես սովորեցի վարժ կարդալ Ղոռանը:

Արձակուրդներին և նոյնիսկ ամեն օր դասերից յետոյ ես միշտ գնում էի հօրս խանութը, որտեղ ես աշխատում էի սովորել նրա արհեստի նախագիտելիքը: Շատ անգամ պատահում էր որ երբ հօրս մուշտարիները խոնչում էին խանութում, և նա ժամանակ չէր գտնում նրանց բոլորին սափրելու, նա ինձ էր յանձնում ջորեպաններին և ուղտապաններին, որոնց երեսների և գլուխների վրայ՝ ես ամենայն եռանդով կատարում էի իմ առաջին փորձերը: Խեղճ մարդիկ, երբեմն ինչպէս էի կըտրատում նրանց երեսները:

Դժուար է ինձ ասել, թէ տասն և վեց տարեկան հասակում արդեօք ես աւելի կատարեալ սափրիչ էի, թէ գրագէտ: Ես ճարպիկ էի ոչ միայն իրեւ սափրիչ, այլ նաև իրեւ քիսաշի: Բաղնիքում ոչ ոք չէր կարող ինձ հետ մրցել մարդկանց մարմինը շփելու, կեղտը մարմնից հանելու, մարմնի զանազան յօդերը տրխսկարխսկացնելու և ձեռքիս թաթովը մարմինը հարուածելու գործի մէջ:

Շնորհակալութիւն իմ ուսուցչին. Նրա շնորհիւ ես այնքան ծանօթացել էի մեր բանսատեղծների հետ, որ կարողանում էի իմ մուշտարիներին մեծ զուարճութիւն պատճառել, նրանց համար կրկնելով հատուածներ. Հաֆէզից, Սաադիից ևային: Մի խօսքով, Հաջի Բարան իր բոլոր լաւ յատկութիւններով մեծ համարում ու համակրանք շահեց բոլոր ճաշակաւոր և զուարճասէր մարդկանց շրջաններում:

Հօրս խանութը կից էր արքունական քարվանսրային, որ ամենամեծն ու ամենից շատ յաճախորդներ ունեցողն էր ամբողջ Սպահանում: Այստեղ, պարապում էին և՛ օտար, և՛ տեղա-

ցի վաճառականներ: Սրանցից մէկը, որ բաղդատցի էր, շատ էր սիրում ինձ: Նա միշտ աշխատում էր համոզել ինձ թողնել հօրս արհեստը և ծառայել իրան: Նա ինձ տաճկերէն խօսել սովորեցրեց: Մի քանի անգամ նա այնպիսի փայլուն ու գրաւիչ կերպով նկարագրեց մի քանի օտար քաղաքներ, որ ես բուռն ցանկութիւն զգացի ճանապարհորդել և իմ աչքով տեսնել նրա տեսած տեղերը: Նա կարիք ունէր մի գրագրի, և որովհետեւ ես և սափրիչ էի, և գրագիր, ուստի նա ուրախութեամբ այնպիսի պայմաններ առաջարկեց ինձ, որ ես առանց դանապաղելու խօսք տուի նրան մտնել իր ծառայութեան մէջ և ճանապարհորդել իր հետ: Յետոյ նա հօրս յայտնեց իմ դիտաւորութիւնը:

Հայրս երբէք ուրախ չէր բաժանուիլ ինձանից: Նա համոզում էր ինձ երբէք չթողնել իր հաստատուն արհեստը և սկսել մի նոր գործ, որը գուցէ ձախորդութեան մէջ պիտի ձըգէր ինձ: Սակայն երբ նա իմացաւ թէ ինչքան նպաստաւոր էին վաճառականի առաջարկած պայմանները, և մտածելով որ շատ հաւանականաբար ես էլ շուտով մի վաճառական կը դառնայի, կամաց-կամաց զիջեց և վերջապէս ընծայելով ինձ մի քանի ածելիներ՝ շնորհեց ինձ իր հայրական օրհնութիւնը, և թուլ տուեց ինձ բաժանուել իրանից:

Մայրս շատ տիրեց, երբ տեսաւ, որ պիտի զրկուէր ինձանից: Նա կասկածում էր, որ ես մեծ անյաջողութեան կամ վըտանգի պիտի հանդիպէի, որովհետեւ, ըստ իր կարծեաց, շատ տարօրինակ և մինչև անգամ խիստ վատ հետևանք ունեցող հանգամանք էր մի շիա մահմէդականի համար՝ մտնել մի վաճառականի ծառայութեան մէջ, որ սոննի \*) մահմէդական էր: Այսուամենայնիւ նա, իրեւ նշան մայրական սիրոյ, ընծայեց ինձ մի պարկ ջարդուած շաքարահաց և մի փոքրիկ թիթեղեայ տփով թանկագին սպիդանի որ, ինչքէս ինքն ասում էր, մի լաւ գեղ էր բժշկելու ամեն տեսակ վէրքեր: Բաժանմանս ժամանակ նա պատիրեց ինձ երես ետ դարձնել և մի անգամ նայել գէպի մեր տան դուռը իրեւ նշան կամ ուխտ՝ շուտ և յաջող վերադարձի:

—

\*) Մահմէդականները բաժանուած են երկու աղանդների—սոննի և շիա: Տաճիկները սոննի են, իսկ պարսիկները շիա: Առաջինները՝ ընդունում են Օմարին, Օսմանին և Արօւքէրին իրեւ Մոհամէդի օրինաւոր յաջորդներ: Վերջինները ասում են որ իրեւ թէ նրանց բանակալներ են եղեւ, և թէ Ալին՝ Մոհամէդի փեսան, նրա (Մոհամէդի) անմիջական յաջորդն է:

ԳԼ. բ.

Հաջի Բարան սկսում է իր ճանապարհորդութիւնը: — Նա գերի է ընկնում՝ Թիւրքմէնների ծեռքը:

Օսման աղան՝ բաղդատցի վաճառականը, որ վարձեց ինձ որպէս զրագիր, ճանապարհ ընկաւ դէպի Մէշնէդ, նպատակ ունենալով այստեղից Բոխարա գնալ, գառան մորթի գնել և Պոլիս տանել վաճառելու համար: Երևակայեցէք մի կարճահասակ ու պարարտ մարդ, մեծ գլխով, գուրս ցցուած ու սպունդանըման քթով, խիտ ու սև մօրուքով, և դուք կը տեսնէք Օսման աղային ձեր առջև կանգնած:

Նա շատ բարի մի մուտուկման էր, խիստ ժիր ու ճշուապահ իր աղօթքների մէջ: Նա երբէք չէր մոռանում աղօթելիս իր գուզամները հանել և իր ոտները լուսանալ իր աղօթքներն Ալլահին ընդունելի դարձնելու համար: Նա խիստ ատում էր Ալիի հետևողներին, թէպէտ Սպահանում եղած ժամանակ՝ նա միշտ թագցնում էր այդ ատելութիւնը:

Օսման աղայի միակ իշճն ու նպատակն էր փող դիզել: Նա երբէք անկողին չէր մտնում առանց իր փողը տեղաւորելու մի ապահով տեղում: Նա մեծ հոգ էր տանում իր հանդըստութեան համար. ծխում էր անդադար, ուտում էր շատ և ծածուկ գինի էր խմում, թէպէտ մարդկանց մօտ՝ նա անէծք ու նախատինք էր կարդում նըանց, որոնք գինի կամ օղի էին գործածում:

Կարաւանը պիտի ճանապարհ ընկնէր գարունքին: Մէնք պատրաստութիւններ տեսանք մեր ճանապարհորդութեան համար: Օսման աղան մի լաւ ձի գնեց իրան համար: Խսկ ինձ համար՝ ջորեալանից վարձեցինք մի ջորի, որ պիտի տանէր ինձ և աղիս ղայլանը իր ամրող սարքով: Վարձեցինք մի ուրիշ ջորի էլ, որ պիտի տանէր մեր խափշիկ խոհարարին և մեր ճանապարհորդական անկողինը, կարգեաները, կաթսաները և այլն: Մի երրորդ ջորի էլ վարձեցինք մի զոյգ խուրջինի համար, որի մէջ պիտի տեղաւորուէին աղայիս հանդերձներն ու մի քանի ուրիշ հարկաւոր իրեր:

Ճանապարհուելուց մի օր առաջ իմ խոհեմ ու հեռատեսաղան իր ծանր շալմայի թասակի բամբակի \*) մէջ թագցը-

\*) Հալմայի թասակ նշանակում է բամբակով լցուած մի չոթէ զլխարկ, որի շուրջն են փաթաթում շալը կամ մտլան:

ըեց 50 դուկատ փող, որի մասին ոչ ոք լուր չունէր, բացի ինձանից: «Ո՞վ գիտէ, յանկարծ նեղ տեղ ընկած ժամանակ այս փողը պէտք կը դայ մեզ, ասաց նա: Բացի սրանից, նա բաւական մեծ գումար էլ վերցրեց՝ գառան մորթի գնելու համար, սակայն այս փողը նա զգուշութեամբ տեղաւորեց փոքրէկ կաշէէ քսակների մէջ, որոնց նա թագցրեց խուրչինում դըրուած իրերի մէջ:

Կարաւանը պատրաստ էր ճանապարհ ընկնելու: Նա բաղկացած էր հինգ հարիւր ջորիներից ու ծիերից և երկու հարիւր ուղտերից, որոնցից շատերը բարձուած էին ապրանքներով հիւսիսային Պարսկաստանում վաճառելու համար: Մենք՝ ճանապարհորդներս էլ թուզ հարիւր և յիսուն հոգի էինք—աղաներ, ծառաներ, ջորեալաններ և ուղտապահներ:

Մեր կարաւանին միացան մի խումբ ուխտաւորներ, որոնք գնալու էին Մէշհէդ Խմամ Ռէզայի զերեզմանն այցելելու: Այս ուխտաւորների՝ մեզ ուղեկցելը մեծ շուրջ ու ահաւորութիւն էր տալիս մեր կարաւանին:

Կարաւանի հետ ճանապարհորդողները միշտ զինուած են լինում: Օսման աղան էլ, որ մի հրացանի ձայն լսելիս սարսափելով գլուխը ետ էր դարձնում, կարծելով թէ գնդակն իր զլսին պիտի կպչի, և մի մերկացրած սուր տեսնելիս դողում էր, այժմ մի հրացան ունէր իր ուսից ձգած, մի կեռ թուր գօտուց կախուած և մի զոյդ ատրճանակ իր գօտու ծալքերի մէջ զետեղուած:

Ես ինքս էլ ոսից մինչև գլուխ զինուած էի: Մի զէնք որ աղաս ունէր և ես չունէի՝ մի երկար նիզակ էր: Մեր խափակ խոհարարն էլ զինուած էր մի սրով, որը կէսից կոտրուած էր, և մի հրացանով, որ ձգան չ'ունէր:

Վերջապէս մի առաւօտ շատ կանուխ մենք ճանապարհ ընկանք Սպահանի հիւսիսային կողմից: Մեղ առաջնորդում էին մի քանի շառուշներ (\*), որոնք իրանց բարձր աղաղակներով և պղնձէ թմբուկների խփելով յայտարարեցին Սպահանի ժողովրդին, որ կարաւանը ճանապարհ է ընկում:

Մենք շուտով ծանօթացանք մեր ուղեկիցների հետ, որոնք թէպէտ բոլորն էլ լաւ զինուած էին, այնուամենայնիւ շատ խաղաղասէր մարդիկ էին երևում:

\*) Հասւշներ այն մարդիկն են, որոնք յանձն են առնում ովտաւարներին առաջնորդել, նրանց համար օթևան պատրաստել, ովեկիցներ ժողովել, աղօթքի ժամը յայտարարել, վիճաբանութիմներին վեց տալ և խաղաղութիւն ձգել վիճողների մէջ:

Կարաւանն իր զանազան երևոյթներով մեծ զուարձութիւն էր պատճառում ինձ։ Սրտիս մեծ ուրախութիւնից ես մի քանի անգամ ձիավարժութիւն արի կարաւանի շուրջը։ բայց Օսման աղան բարկութեամբ հրամայեց ինձ թողնել ձիավարժութեանս փորձը, զգուշացնելով ինձ։ «Եթէ դու այդպէս անես, այդ խեղճ կենդանին կը փչանայ և այլևս չի կարողանալ մեղ տանել»։

Ես շուտով սիրելի ընկեր դառնայ բոլոր ճանապարհորդներին, որոնց շատերին համարեա ամեն օր իրիկնապահին սափրում էի։

Չափազանցութիւն չը համարուի ասել, որ Օսման աղայի համար ես միիթթարութեան մեծ աղբիւր էի, որովհետև ամեն անգամ իջևան հասնելուն պէս ես շուտ շփում է նրա մարմինը և այնպէս հանգստացնում էի նրան, որ նա բոլորովին մոռանում էր իր յոդնածութիւնը։

Առանց որևէ արգելքի կամ վտանգի հանդիպելու մենք վերջապէս հասանք Թէհրան, որտեղ տասն օր մնացինք, հանգըստացնելու մեր ջորիներին և աւելացնելու կարաւանի թիւը։ Ճանապարհորդութեան վտանգաւոր մասը դեռ մեր առաջն էր, որովհետև թիւրքմէնները, որոնք այդ ժամանակ կուռում էին պարսիկների հետ, բռնել էին բոլոր ճանապարհները, և մի քանի օր առաջ թալանել էին մեզանից առաջ գնացող մի կարաւան և գերի էին տարել ճանապարհորդներին։

Այս լուրը այն աստիճան սարսափ ձգեց ամբողջ կարաւանի մէջ, որ մեզանից շատերը, մասնաւրապէս աղաս, մըտածեցինք Մէշհէդ չգնալ, սակայն գառան մորթու գինը, որ այնքան բարձրացել էր Պոլսում, Օսման աղային մոռացնել տուեց իր բոլոր երկիւղները, և նա վճռեց շարունակել իր ճանապարհորդութիւնը։

Զառուշներից մէկը մեծ թւով ուխտաւորներ էր հաւաքել Թէհրանից և նրա շրջակայքից և սպասել էր մեր կարաւանի Թէհրան հասնելուն։ Անշուշտ մենք չափազանց ուրախացանք այս հանգամանքի վրայ, որովհետև ինչքան աւելի մեծ լինէր մեր կարաւանը, այնքան քիչ էր լինէր մեր երկիւղը։ Այս չառւշը մի յայտնի անձնաւորութիւն էր։ Թէհրանից մինչեւ Մէշհէդ ամեն տեղում ամեն մարդ ճանաչում էր նրան։ Նա մեծ հռչակ էր վայելում նրա համար, որ մի անգամ Մէշհէդի ճանապարհի վրայ ընկած մի մեռած թիւրքմէնի գլուխը քաջութիւն էր ունեցել կտրելու։ Նրա արտաքինը սարսափելի էր։ Իր բարձր հասակով, լայն կրծքով և սեաթոյը դէմքով նա սարսափ էր ազդում ամենքի վրայ։ Մի մեծ երկաթէ լանջա-

պանակ հագին, մի պատերազմական սաղաւարտ գլխին, մի կեռ թուր կողքիցը կախուած, մի զոյգ ատրճանակ իր գօտու մէջ զետեղուած, մի վահան ուսիցը կախուած մէջքի վրայ, մի երկար նիզակ ձեռքումը—այս բոլորով՝ նա հանդէս էր գալիս իբրև մի անվեհեր և անյաղթ զինոր, որ անարգում էր ամեն վտանգ:

Նա այնքան պարծենում էր իր քաջագործութիւնով, և այն աստիճան ատելութիւն էր ցոյց տալիս դէպի թիւրքմէնները, որ Օսման աղան մոռացաւ ամեն վախ, իր յոյսը նրա վրայ դրեց և վճռեց յառաջ գնալ միմիայն նրա առաջնորդութեամբ:

Վերջապէս մենք մեկնեցինք Թէհրանից: Մենք անցնում էինք այնպիսի ճանապարհներով, որտեղ ոչ մի բան չէր երևում զբաղեցնելու մեր մտքերը կամ ուրախացնելու մեր սրաերը: Երբ մօտենում էինք որևէ մի գիւղի կամ հանդիպում էինք ճանապարհորդների, մեր առաջնորդներն սկսում էին սուր ձայնով աղաղակներ բարձրացնել դէպի Ալլահն և իր Մարգարէն, միենոյն ժամանակ խփելով իրանց թմբուկներին, որ լայն փոկերով կապուած էին իրանց ձիերի թամբերից:

Ճանապարհին մեր խօսակցութեան գլխաւոր առարկան էին՝ թիւրքմէնները: Թէպէտ մենք բոլորս էլ համոզուած էինք որ նրանք մեր արիւնարբու թշնամիններն են, այդուամենայնիւ մենք աշխատում էինք փարատել մեր վախը և մխիթարել մեզ այն մտածմունքով որ նրանք չեն համարձակուիլ դուրս գալ մեր բազմաթիւ կարաւանի առաջ: «Յանուն Ալլահի, Բամշունն են նրանք», ասում էինք մենք, որ յանդքնեն մեր հանդէպ գալ:

Մեղանից ամեն մէկը պարծենում էր իր ուժով ու քաջութիւնով: Օսման աղան էլ, որի ատամները անդադար չըխկչրխկում էին վախից, ամենից աւելի՝ պարծենկոտութեամբ ու ինքնավստահութեամբ աշխատում էր համոզել մեզ թէ վտանգի ժամանակ՝ ինքը մեծ արիւթիւն պիտի ցոյց տայ: Նա այնքան ինքնարաւականութեամբ էր խօսում, որ նրան անծանօթ մէկը պիտի կարծէր, թէ նա իր ամբողջ կեանքուա զբաղուած է եղել թիւրքմէնների հետ կուելով ու նրանց կոտորելով:

Երբ մեր չառւշը լսեց Օսման աղայի փքուն խօսքերը, վրդովուեց և ասաց.

—Ո՛չ ոք չէ կարող թիւրքմէնների մասին խօսել, մինչեւ որ ինքն իր աչքերով չտեսնէ նրանց: Ո՛չ ոք, բացի «առիւժ ռառողից» (միենոյն ժամանակ վեր ոլորելով իր բեկների ծայ-

թերը դէպի իր աչքերի անկիւնները) չէ կարող ազատուել նը-  
րանցից, երբ մի անգամ նրանց ձեռքն ընկնելու դժբախտու-  
թիւնն ունենայ:

Ինչևէ, մի քանի օր ճանապարհորդելուց յետոյ, մեր չառ-  
շը մի օր բաւական ահաւոր եղանակով ասաց.

Ահա մենք մօտենում ենք ճիշտ այն տեղերին, որտեղ  
թիւրքմէնները սովորաբար դարանամուտ են լինում յարձա-  
կուելու կարաւանների վրայ: Ես ձեզ խորհուրդ եմ տալիս որ  
բոլորդ էլ ի մի խմբուած գնաք և պատրաստուէք մի թունդ  
դիմադրութիւն անելու նրանց, եթէ համարձակուեն մեր առաջ  
դուրս գալ:

Զառւշի այս խօսքերը լսելուց յետոյ Օսման աղայի ա-  
ռաջին գործն եղաւ ամրացնել իր սուրբ, ատրճանակներն ու  
հրացանը ջորիններից մէկի վրայ: Յետոյ նա սկսեց կեղ-  
ծել իրը թէ յանկարծ մի սաստիկ փորացաւ բռնեց, և մոռա-  
նալով քիչ ժամանակ առաջ իր արտասանած ինքնագովական  
խօսքերը, այժմ փաթաթուեց իր երկար վերարկուի մէջ և այն-  
պէս ձևացրեց, որ տեսնողը պիտի կարծէր թէ մի սաստիկ ցա-  
ւից նրա հոգին դուրս էր գալիս: Յետոյ նա սկսեց համրել իր  
թէսքին շարունակ բացագանչերով էսթաֆորէլլահ (Ալլահն  
ներէ ինձ) և այսպէս նա պատրաստուեց խոնարհուել իր ճա-  
կատագրի առաջ: Իր փրկութեան յոյսը նա զրել էր մեր չառ-  
շի վրայ, որը բացի իր ուժից ու քաջասրտութիւնից՝ ունէր  
նաև մի այլ զօրութիւն՝ մի քանի թալիսմաններ որ կապուած  
էին բազկից:

—Այս թալիսմանները, ասում էր չառշը, կը վանեն  
թիւրքմէնների նետերը:

Ի վերջոյ տեղի ունեցաւ այն, ինչ մենք ահով ու գողով  
սպասում էինք: Մենք յանկարծ լսեցինք մի քանի հրացանների  
ձայներ, որոնց յաջորդեց մի խումբ կատաղի ու վայրենի  
մարդկանց գոռում գոչիւններ: Ամբողջ կարաւանը սարսափած-  
կանգ առաւ: Մարդիկ, ջորիններ և ուղտեր բոլորն էլ խոնուե-  
ցին միմիանց մօտ, և մի քանի բոպէից յետոյ՝ թիւրքմէնները  
մօտեցան մեզ: Ուղևորներից ոմանք փախան, ոմանք էլ, որոնց  
մէկն էր իմ աղան, վախից բոլորովին ուժաթափ եղան և սկսե-  
ցին աղաղակել.

—Ո՞վ Ալլահ, ով իմամներ, ով Մոհամէդ, ահա մենք կո-  
րըստեան վրայ ենք, մենք մեռնում ենք, արդէն մեռնոք:

Զորեպանները բեռները վայր ձգեցին ջորինների վրայից  
և քշեցին նրանց այս ու այն կողմ: Թիւրքմէնների նետերն

սկսեցին կարկուտի պէս տեղալ մեր վրայ, և մի քանի բու-  
պէում մենք յաղթուելով գերի ընկանք նրանց ձեռքը:

Մեր չառշը որ, ինչպէս ինըն ասել էր, շատ անգամներ  
աղատուել էր այսպիսի վտանգներից, ամենից առաջ փախաւ  
և մենք այլև չը տեսանք նրան, Յաղթականներն ընկան մեր  
բեռների վրայ, որ այստեղ ու այնտեղ թափթափուած էին, և  
ընթերցողը թող երեսակայէ թէ ինչ եղաւ:

Օսման աղան հնարք էր գտել թագնուելու երկու հակերի  
մէջտեղում իր վերարկուի մէջ փաթաթուած՝ այնպէս էր պառ-  
կել գետնի վրայ, որ տեսնողը կարծէր թէ նա էլ մի հակ  
է: Այդպէս էլ կարծել էր մի վիթխարի թիւրքմէն և նրան  
բարձրացնելով, հակը մարդ էր դառել և ընկել նրա ճանկը:

Նա փորձեց թիւրքմէնի զթութիւնը շարժել Ալիին անի-  
ծելով ու Օմարին դիմելով, սակայն իզուր: Կատաղած մարդը  
մերկացրեց նրան, թողնելով նրա հագին միայն վարտիքը: Նրա  
չալմային էլ ձեռք չը տուեց, որովհետև յարգում էր նրա  
գոյնը:

Գալով ինձ, իմ շորերն այնքան աննշան բաներ էին որ  
թիւրքմէնն ինձ տկորոելու նեղութիւնը չուղեց կրել: Ածելի-  
ներս էլ մնացին ինձ հետ:

Թիւրքմէնները վերջացնելով իրանց կողոպուտը սկսեցին  
իրանց մէջ բաժանել գերիներին: Մեր աչքերը փակեցին և  
իւրաքանչիւրին մի թիւրքմէնի ետևում, նրա ձիու վրայ նըս-  
տեցնելով, քշեցին ձիերը: Ամբողջ օրը ճանապարհ գնացինք  
և գիշերուան դէմ հասանք մի ձոր: Միւս օրը մեղ թոյլ տուին  
բանալ մեր աչքերը, և ահա մեղ գտանք այնպիսի մի վայրում,  
որին միայն թիւրքմէններն էին ծանօթ: Այստեղից դուրս գա-  
լով, անցանք ամայի վայրերով և լեռների կիրճերով, մինչև  
վերջապէս հասանք մի ընդարձակ ու կանաչկոտ դաշտ, որ  
ծածկուած էր մեր թշնամիների բազմաթիւ սև վրաններով:

Գլ. գ.

Թէ Հաջի Բարան ինչպիսի մարդկանց ծեռքն է ընկնում:— Իր ածելիների  
միջոցով ինչպէս է բախտաւորում:

Թիւրքմէններն իրանց գերիներին այնպէս բաժանեցին ի-  
րանց մէջ, որ ես ու Օսման աղան ընկանք այն բարբարոս ու  
վիթխարի մարդին, որի մասին քիչ առաջ պատմեցի: Նա կոչ-  
ւում էր Ասլան Սուլթան (առիւծ պետ), որովհետև նա մի մեծ  
բանակի պետ կամ գլխաւորն էր:

Երբ մենք հասանք Ասլան Սուլթանի վրանների մօտ, բուլոր բնակիչները դուրս վազեցին մեզ տեսնելու, և մենչդեռ նըրանք ուրախ ու բարձր ձայներով ողջունում էին իրանց պետին, մեզ վրայ հաջում էին նրանց կատաղի շները և ուզում էին ողջ-ողջ կուլ տալ մեզ:

Օսման աղայի գլխարկի շուրջը փաթաթուած կանաչ շալը մեծ նշանակութիւն էր տալիս նրա անձնաւորութեանը: Նրան բաւական յարգում էին հէնց այդ շալի պատճառով, սակայն նա շուտով զրկուեց դրանից, որովհետեւ մեր պետի աւագ կինը՝ Բանուն, բուռն ցանկութիւն զգաց նրան սեփականացնելու, և առաւ նրանից, թողնելով նրա զլիսին միայն գլխարկը, որի մէջ պահուած էր 50 դուկատ փողը: Քիչ յետոյ, թիւրքմէնի երկրորդ կինն էլ ցանկացաւ տէր դառնալու նրա գլխարկին, ասելով որ դա շատ յարմար մի բան էր փափկացնելու իր ձիու թամբի տակը որ կոշտացել էր: Գլխարկն էլ վերջապէս առնուեց նրանից և գցուեց վրանի մի անկիւնը, որտեղ պահուում էին զանազան մանր-մունը իրեր:

Օսման աղան շատ ջանացաւ ձեռքից չտալ իր գլխարկը, սակայն իզնէր: Իր գլխարկի փոխարէն, նրան տուին մի ոչխարի մորթէ փափախ, որ մի ժամանակ պատկանել էր մեզ նման մի անբախտ գերու, որ մեռել էր թշուառութիւնից:

Մեռած մարդու գլխարկը իմ աղային յանձնելով, Ասլան Սուլթանը հրամայեց նրան ստանձնել և այն պաշտօնը, որ այն մեռած մարդը վարել էր, այսինքն արածացնել ուղտերին. և որովհետեւ նա՝ Օսման աղան՝ մի պարարտ և ծանրաշարժ մարդ էր, ոչ ոք չէր էլ կասկածում թէ նա կը փախչի: Ինձ յանձնեցին ինոցի հարելու պաշտօնը և իիստ արգելեցին չհեռանալ վրանների մօտից:

Ի յիշատակ իր քաջագործութեան, թիւրքմէն պետը մի մեծ ինչոյք սարբեց՝ ամբողջ բանակը հիւրասիրելուու նա պատրաստել տուեց մի մեծ կաթսայ վլաւ և հրամայեց տապակել երկու ոչխար: Նա հրաւիրեց իր ազգականներին, որոնք եկան հարեան վրաններից: Տղամարդիկ հաւաքուեցին մի առանձին մեծ վրանում, և կանայքն էլ մի ուրիշում:

Փլաւն ու միսը նախ տարուեց մարգկանց վրանը. և երբ նրանք կերան կշտացան, մնացորդը տարուեց կանանց վրանը: Սրանք էլ երբ կշտացան, մնացորդը տարուեց հովինների մօտ, և երբ նրանք էլ կերան կշտացան, ուկորներն ու ամաններին կպած մասը տրուեց մեզ և շներին:

Սաստիկ քաղցած լինելով ես անհամբեր սպասում էի աման-

Ները լզելու, բայց յանկարծ կանանց վրանի մօտից մի կին գաղտնի կերպով նշան արեց ինձ մօտենալ իրան։ Սիրտս սաստիկ բարախելով, ես զգուշութեամբ մօտեցայ նրան։ Նա իսկոյն տուեց ինձ մի պնակ փլաւ մի կտոր դմակ վրան դրուած և ասաց։

— Այս փլաւը Բանուն է ուղարկել և ասում է, մի տիրիլ, մի մտածիլ քո վիճակի վրայ։

Այս ասելով նա իսկոյն հեռացաւ, առանց սպասելու որ ես յայտնէի իմ խորին շնորհակալութիւնը թէ փլաւի և թէ պատգամի համար։

Այդ օրը տղամարդիկ անցկացրին ծխելով, խմելով, ուտելով և միմիանց պատմելով իրանց արկածների մասին, իսկ կանայք՝ երգելով, թմրուկ զարնելով, զրոյց անելով և այլն։

Մեր պիտի աւագ կնոջ ուղարկած պատգամը շուտով սկսեց զբաղեցնել միտքս ու սիրտս, և ես այն եզրակցութեան եկայ, որ իմ դրութիւնս այնքան էլ յուսահատական չէր, ես աշխատեցի միմիթարել Օսման աղային, բայց իզնւր, որովհետեւ նա անդադար ողբում էր իր թշուառութիւնը առանց մի բոպէ մոռացութեան տալու իր խոր դարդերը։

Ես աշխատեցի յիշեցնել նրան, որ ամեն մի ճշմարիտ մուսուլմանի պարտքն է իր ձախորդութեան ժամանակ իրան միմիթարել «Ալլահ քէրիմ» (Աստուած ողորմած է) բառերով, սակայն նա պատասխանեց։

— Ալլահ քէրիմ, Ալլահ քէրիմ բառերը շատ լաւ են քեզ համար, որ ոչինչ բան չես կորցրել, սակայն ինձ համար՝ որ արդէն կորսուած եմ, այդ խօսքերը ոչինչ միտք չունեն։

Ինչեւ, մենք շուտով պիտի բաժմանուէինք միմիանցից։ Միւս օրը նա դարձեալ ուղարկուեց հեռու դաշտերը արածացընելու իրան յանձնուած յիսուն ուղտերին։ Թիւրքմէն պետը նրան սպառնաց որ եթէ ուղտերից մէկը կորչի, նա կտրել կը տայ նրա քիթն ու ականջները։

Իմ կարեկցութիւնն ու սէրը նրան ապացուցանելու գիտաւորութեամբ ես այդ օրը—ինչոյքի օրը, նրան ձրիապէս սափրեցի ամբողջ բանակի առաջ, միենայն ժամանակ յուսալով որ իմ արհեստը ապարդիւն չի մնալ ինձ համար։

Շուտով ամեն մարդ սափրուելու կարիք զգաց։ Այդ օրը շատերին սափրեցի, և իմ համբաւը որպէս մի հմուտ սափրիչի, հասաւ Ասլան Սուլթանի ականջին։ Նա էլ անմիջապէս ինձ կանչեց իր մօտ և հրամայեց սափրել իրան։

Ես սկսեցի սափրել մի գլուխ, որի վրայ կային մի քանի սրի հարուածներ։ Երբ վերջացրի, նա արտայայտեց իր կա-

տարեալ բաւականութիւնը և երդուեց այլևս փրկանք չառնել ինձանից իմ կեանքի համար։ Այդ բովէից նա նշանակեց ինձ իր անձնական սափրիչ։ Ընթերցողը կարող է այժմ երևակայել թէ այս հանգամանքը որքան ուրախութիւն պատճառեց ինձ։ Ես չոգեցի և համբուրեցի իմ այս նոր աղայի ծնկները, իբրև նշան խորին երախտազիտութեան։

ԴԼ. դ.

Հաջի Բաբային յաջողուում է ձեռք բերել Օսման աղայի  
50 դոկատը։

Ես այժմ սկսեցի մտածել և մի հնարք գտնել յաջողացնելու իմ փախուստը։ Վճռեցի ամենից առաջ ձեռք բերել Օսման աղայի գլխարկի միջի փողը։ բայց ինչպէս յաջողացնել այդ, քանի որ գլխարկը պահուած էր կանանց վրանի մի անկիւնում։

Բանուն՝ մեր պետի աւագ կինը, սիրում էր ինձ, ես էլ նրան։ սակայն մեզ ոչ մի առիթ չէր ներկայանում մօտենալ միմիանց։ Երբեմն մեզ յաջողուում էր միայն հեռուից դէմքի փոխադարձ արտայայտութիւններով։ Խօսել միմիանց հետ, կարդալ միմիանց սրտերը։

Պարսկաստանում, սափրիչները կատարում են նաև վերաբուժի և ատամնաբուժի պաշտօն։ Բանուն գիտէր այդ։ Մի օր նա մարդ ուղարկեց ինձ մօտ հարցնելու թէ արդեօք ես կարմղ կը լինէի արիւն առնել իրանից։

Ահա մի լաւ առիթ նպատակիս համանելու։ Ես առանց վարանելու պատախանեցի։

—Ես լաւ հմուտ եմ արիւն առնելու գործի մէջ, միայն անշոշտ այն պայմանով, որ մի լաւ սրածայր գրչահատ տըրուի ինձ։

Ուզեցածս գործիքը շուտով ճարուեց, և թիւրքմէնների մէկը, որ աստղագէտ էր համարւում, յայտնեց թէ մոլորակների դրութիւնը ցոյց էր տալիս որ այս ի՞նչ առաւօտ՝ ամենայարմար ժամանակը կը լինէր, Բանուից արիւն առնելու համար։

Հասաւ այդ ցանկալի առաւօտը, և ահա ես ինձ գտայ կանանց վրանում, որտեղ Բանուն նստած էր մի գորգի վրայ։ Մի բովէում ես նկատեցի որ նա մի անձնաւորութիւն չէր որ կարողանար փափուկ զգացումներ յարուցանել սրտիս մէջ, ո-

քովհետև նրա պէս մի հաստակազմ \*) կնոջ ես երբէք չէի կարող սիրել: Բացի դրանից, ես սարսափով էի նայում նրան, որովհետև գիտէի որ ամենաթեթև նայուածքը կամ շարժումը իմ կողմից՝ կարող էր կասկածանքի մէջ ձգել Ասլան Սուլթանին և նա կտրել կը տար քիթս ու ականջներս:

Ես ցանկութիւն յայտնեցի շօշափել Բանուի բազկերակը: Նա իսկոյն ձեռքը մեկնեց և դրեց իմիս մէջ, և ես բաւական լուրջ քննութիւնից յետոյ ասացի:

—Դուք իսկապէս հիւանդ էք, և ձեր հիւանդութիւնը խիստ բարդ է: Շատ լաւ էք մտածել որ ինձ կանչել էք ձեզանից արիւն առնելու. սակայն ձեր արիւնը չը պիտի թափուի գետնի վրայ, այլ պիտի պահուի մի ամանի մէջ, որպէսզի ես զգուշութեամբ քննեմ նրան:

Այս իմ առաջարկութիւնը մի նոր նեղութեան մէջ ձգեց ինձ, որովհետև թիւրքմէններն այնքան հարուստ չէին կարասիններով որ կարողանալին մի ամանից ձեռք քաշել և զնել իմ արամագրութեան տակ, որ արիւնով պղծէի: Այս ու այն կողմն ընկան, բայց մի աման չը գտան ինձ տալու: Ես հէսց ուզում էի մօտենալ վրանի անկենին և վերցնել Օսման աղայի գլխարկը ծառայեցնելու իբրև մի անօթ, երբ յանկարծ Բանուի միան ընկաւ մի հին կաշւէ ջրաման, նա հրամայեց իր աղասիներին շուտով գտնել և բերել այն:

Կաշւէ ամանը շուտով բերուեց և տրուեց ինձ: Ես բըռնեցի նրան լոյսի առաջ և ասացի.

—Այս չի լինի, այս չի լինի, որովհետև սրա կարերը կտրատուած են:

Այս ասելով ես ձեռքիս գրչահատովը անտեսանելի կերպով կտրատեցի մի քանի կարեր և կրկնեցի.

—Ո՞չ, այս չի լինի, արիւնը կը թափուի սրա միջից:

—Ո՞րտեղ է այն ծերունի էմիրի (Օսման աղայի) գլխարկը, հարցրեց Բանուն իր աղափիններից:

—Այն գլխարկն իմն է, ասաց մեր պետի երկրորդ կինը: Ես ուզում եմ նրանով փափկացնել ձիուս թամբը:

—Քո՞նն է, հարցրեց նրա երրորդ կինը կատաղած: Միթէ ես այս հարէմում ոչինչ եմ: Ո՞չ, այդ գլխարկն ինձ պիտի տրուի:

\*) Տաճիկները ճաշակի տեսակէտից տարրերում եմ պարսիկներից նրանք, որ առաջինները սիրում են հաստիկ, շաղիկ կին, իսկ վերջինները՝ նըրքակազմ, որպէսին սիրում է նըրպայում:

— Ռ. Քեզ չպիտի տրուի, ասաց մի ուրիշը:

Այս վիճաբանութիւնը սուր կերպարանք ստացաւ, վրանի կանայք մեծ աղմուկ բարձրացրին, ևս վախեցայ որ աղմուկը շուտով Ասլան Սուլթանի ականջին հասնի և նա վէճին վերջ տալու համար անտարակոյս մէջտեղից կը վերցնէր կուտածաղիկը: Բարեբախտաբար աստղագէտը միջամտեց՝ ասելով երկրորդ կնոջը.

— Եթէ ձեր վէճը մի վատ հետևանք ունենայ, Բանուի արիւնը ձեր վզին կը մնայ. ուստի թող խաղաղութիւն լինի ձեր մէջ:

Վիճաբանութիւնը դադարեց, և ես պատրաստուեցի սկսել իմ գործողութիւնը, սակայն երբ Բանուն տեսաւ ձեռքիս սուր գրչահատը, վախեցաւ և թոյլ չտուեց ինձ ծակել իր բացուկը:

Գլխարկը ձեռիցս չտալու համար ես դէմքս մուայլեցրի և նրա զարկերակը կրկին շօշափելով՝ ասացի.

— Անօգուտ է ձեր կողմից մերժել ինձ և թոյլ չը տալ ձեր վրայ կատարել այն, ինչ որ ճակատագիրը պահանջում է: Ամեն մարդ գիտէ, որ աշխարհիս սկզբից մինչև այսօր ոչ չէ կարողացել իրաց դարձնել որևէ գիմպուած կամ դիմադրել ճակատագրին:

Թոլորն էլ հաւատացին այս խօսքերիս, և Բանուն թոյլ տուեց ինձ սկսել գործը: Նա մերկացրեց իր բազուկը և մեծ քաջութեամբ դիմացաւ գրչահատի հարուածին:

Արիւնը թափուեց գլխարկի մէջ, և երբ ես վերջացրի գործս, Բանուին ասացի.

— Հրամայեցէք, որ այս գլխարկը մի հեռու տեղ տանեն և ոչ ոք, բացի ինձանից, չմօտենայ նրան. որովհետև ինչ չար կամ բարի հետևանք էլ ունենալու լինի ձեր արիւն առնելը, կախումն ունի նրանից, թէ ինչ կը պատահի այն արիւնին, որ հոսել էր ձեր մարմնից:

Բանուն իսկոյն հրամայեց գլխարկը բանակից շատ հեռու մի տեղ դնել: Ես անհամբեր սպասեցի մինչև գիշեր, և երբ բոլորն էլ քնել էին, ես գնացի վերցրի գլխարկը, կարերը քանդեցի և... և վերցրի 50 դուկատը. Յետոյ գլխարկն էլ, փողն էլ առանձին տեղերում թաղեցի հողի տակ և գնացի քնելու:

Միւս առաւատը ես ներկայացայ Բանուին և յայտնեցի նրան, որ իրը թէ իր արիւնը զայլերից կամ որևէ մի չար պատահարից աղատ պահելու համար ես խոհեմութիւն էի համարել իմ ձեռքով գլխարկը թագնել հողի տակ: Բանուն շատ գոհ եղաւ որ ես այդպէս էի արել, և իրը վարձատրութիւն

իմ արած ծառայութեան համար, նա այդ օրը ինձ համար ուղարկեց իր ձեռքով տապակած մի գառ:

Օսման աղայի 50 դուկատը, որ այժմ իմ սեփականութիւնն էր, աչքիս առաջ բերեց նրա ողբալի դրութիւնը: Ես մոտածեցի փողի և տապակած գառի կէսը նրան տալ, սակայն երկրորդ մտածողութեամբ ես վճռեցի երբէք էլ փողի անուն չիշել նրան:

«Եթէ ես չը լինէի, եթէ իմ խելքը չը լինէր, մտածեցի ես, այս փողը իսպառ կորսուած պիտի մնար: Ուրեմն ովզ է այն մարդը որ ինձանից աւելի իրաւոնք ունի տէր դառնալու նրան: Օսման աղայի ճակատագիրն էր՝ զրկուել այդ փողից, իսկ իմ բախտն էր՝ տիրանալ նրան»:

Վերջապէս, փողի խնդիրը մի կողմ դրի և վճռեցի գառան կէսը նրան ուղարկել: Շուտով ես վարձեցի մի հովիւ տղայ, որին յանձնեցի միսը և պատուիրեցի որ ճանապարհին չուտէ: Նա ճանապարհ ընկաւ, և հազիւ թէ մի երկու հարիւր քայլ հեռացել էր բանակից, ես նկատեցի որ նրա ձեռքը շուտ շուտ բարձրանում էր դէպի իր բերանը: Ես եղրակացրի որ դեռ ճանապարհի կէսը չհասած՝ նա արդէն ոսկորներն էլ կրծած կը լինի: Եւ անօգուտ կը լինէր իմ կողմից վազել ու բռնել նրան որովհետեւ ես չէի կարող համնել նրա ետևից. բացի դրանից, ես իրաւոնք չունէի բանակից հեռանալ: Ուստի ես ինձ բաւարացրի մի քար գցելով նրա ետևից և մի քանի յիշոցներ տալով նրան: Թէպէտ քարն էլ, յիշոցներս էլ ոչ մի նշանակութիւն չ'ունեցան նրա համար:

### Գլ. ե.

Հաջի Բաբան ինքն իրան պաշտպանելու համար աւազակ է դառնում եւ Թիւրքմէններին առաջնորդում է ասպատակելու իր հայրենի քաղաքը:

Արդէն ամբողջ մի տարի էր անցել այն օրից, երբ ես թիւրքմէնների ձեռքն էի ընկել: Այդ մի տարուայ մէջ ես իմ վարքով ու բարքով շատ սիրելի էի դարձել Ասլան Սուլթանին: Նա խորհրդակցում էր ինձ հետ իր բոլոր գործերի մասին և որովհետեւ նա համոզուել էր որ ես միանգամայն կախուած էի իրանից, նա վճռեց թոյլ տալ ինձ մասնակցել Պարսկաստանում անելիք իր աւազակութեան գործին:

Մինչև հիմա, ինձ թոյլ չէին տուել հեռանալ բանակից. հետևապէս, ես բոլորովին անծանօթ էի մնացել այն ճանապարհ-

ներին, որ մեզ բաժանում էին Պարսկաստանից: Ես գիտեի որ իմ կողմից մեծ յիմարութիւն կը լինէր փախչել, ինչպէս շատերն էին արել և աւելի դժբախտացրել իրանց. ուստի փախչելու միտքը ես արդէն վաղուց հանել էի գլխից:

Թիւրքմէնները սովորութիւն ունին արշաւանքներ անել գարունքին, որովհետև տարուայ այդ եղանակին նրանք օգտըռում են արօտներից և գաշտերից, որտեղից անցնելիս նրանք արածացնում են իրանց տաւարները: Բացի գրանից, այդ եղանակին ճանապարհներին միշտ կարաւանների կը հանդիպեն:

Գարունը մօտենում էր: Ասլանը ժողովեց իր ցեղի գլխաւորներին - հարիւրապետներին, տամապետներին, և ըոլոր նրանց որոնք վարժ էին թալանի գործի մէջ, նա պատուիրեց նրանց, պատրաստուել շուտով ասպատակելու Պարսկաստանի հէնց սիրտը: Նրա նպատակն էր գիշերով մտնել Սպահան և կողոպտել այն արքունական քարվանսրան, որտեղ ապրում էին ամենահարուստ վաճառականները:

— Սպահան համսնելիս դրւ պիտի առաջնորդես մեզ, ասաց ինձ Ասլանը, մեզանից ոչ մէկը ծանօթ չէ այստեղի բազարներին և փողոցներին:

— Դուք զարմանալի առաջարկութիւն էք անում, ասացին մի քանի թիւրքմէններ: Մենք ի՞նչպէս հաւատ ընծայենք մի մարդու, որ սպահանցի է. նա...»

— Նա ի՞նչպէս կ'առաջնորդի մեզ, մէջ ընկան ուրիշները, չէ՞ որ մենք գնում ենք թալանելու իր ծննդավայրը: Մենք վստահ ենք որ Սպահան համսնելուն պէս նա կը փախչի:

Վերջապէս շատ վիճաբանութիւնից յետոյ համաձայնութիւն կայացաւ, որ ես առաջնորդեմ նրանց, սակայն զգուշացրին ինձ, որ ինձ վրայ փախչելու ամենաթեթև նշոյլը տեսնելու պէս հէնց տեղին ու տեղը կը սպահնեն ինձ.

Մեր արշաւանքն սկսելու ամենաբախտաւոր ժամը, ըստ մեր աստղագէտի գուշակութեան, գիշերը պիտի լինէր: Մենք ճանապարհ ընկանաք: Մեր խումբը բաղկացած էր մեր պետից, ինձանից և քառասուն թիւրքմէններից: Անցանք շատ կիրճերով, խորտ ու բորտ ճանապարհներով, սարերի, բլուրների վրայով և շատ վտանգաւոր տեղերով: Իր տեղագրական գիտութեամբ՝ Ասլան Սուլթանը զարմացրեց մեզ, Բացի այդ գիտութիւնից, նա մեծ խելք ու մեծ փորձառութիւն էր ցոյց տալիս մի ուրիշ բանի մէջ: Ճանապարհներով անցած կենդանիների ոտտատեղերին նայելով նա իսկոյն ասում էր թէ ի՞նչ ճանապարհորդներ են անցել, որտեղից են եկել և որտեղ գնացել, թշնամիներ են

եղել թէ ոչ, թէ նրանք մօտաւորապէս քանի՞ հոգի են եղել  
եայն:

Վերջապէս, 120 ֆարսաղ ճանապարհորդելուց յետոյ մենք  
հասանք Սպահան: Մեր կրած բոլոր նեղութիւնների պտուղը  
վայելելու և իմ քաջութիւնը փորձելու ժամանակն այժմ հասել  
էր: Երբ ես լսեցի թէ իմ ընկերները ինչ ծրագիր էին պատ-  
րաստում յարձակուելու իմ հայրենի քաղաքի վըայ, սարսա-  
փեցի, և սիրու սաստիկ դառնացաւ:

Նրանց ծրագրի համաձայն մենք պիտի մտնէինք քաղա-  
քը այն փողոցներով, որտեղ գիշերապահներ չլինէին, և ճիշտ  
կէս գիշերին յարձակուէինք արքունական քարվանսրայի վրայ:  
Այս ծրագիրը այնքան վատ ու անզործադրելի թւաց ինձ, որ  
ես ստիպուեցի ասել.

—Այս ծրագրով մենք չպիտի ընթանանք. սա...

—Հաջի, լոիր, ընդհատեց ինձ Ասլան Սուլթանը, մեր այս  
գործը երեխայական խաղ չէ, երդում եմ Մարզարէի մորու-  
քով, որ եթէ դու այդպէս խօսես, ես կը ստիպուեմ «այրել հօրդ»:  
Մենք մինչև այսօր միշտ յաջողուել ենք մեր գործերի մէջ, և  
ինչո՞ւ չպիտի յաջողուենք և՛ այս անզամ:

Ես լուեցի և հնազանդութեամբ առաջնորդեցի նրանց աւե-  
րակների միջով և անբնակ փողոցներով, որտեղ գիշերուան այդ  
ժամին ոչ մի արարած չէր երևում: Մենք կանգ առանք մի կիսա-  
քանդուած կամարի տակ, որպիսիներին մարդ յաճախ հանդիպում  
է Սպահանի անբնակ մասերում: Իշնելով մեր ձիերից՝ մենք  
յանձնեցինք նրանց մեզանից երկուսի հսկողութեանը և մեծ  
զգուշութեամբ քայլեցինք բազարներով ու փողոցներով, մինչև  
հասանք արքունական քարվանսրայի դուռը, որ փակ էր: Ես  
վերցրի մի մեծ քարի կտոր և զարկելով դուռը՝ գոչեցի.

—Է՛յ, Ալի Մոհամէդ, դուռը բաց, կարաւանը հասել է:

—Ի՞նչ կարաւան, հարցրեց քարվանսրապահը ներսից:

—Բաղդադի կարաւանը, պատասխանեցի ես:

—Բաղդադի կարաւանը. ի՞նչ ես ասում, ինչո՞ւ ես ծաղրում  
ինձ, Բաղդադի կարաւանը երեկ հասաւ այստեղ:

Տեսնելով որ որոգայթի մէջ եմ ընկնելու, ես ստիպուեցի  
անունս յայտնել, ասելով.

—Այս, Բաղդադի կարաւանը, ինչո՞ւ ես զարմանում, ես  
էլ՝ Հաջի Բաբան եմ, Թէրթէլէի Հասան սափրիչի որդին եմ, որ  
անցեալ տարի բաղդադցի վաճառական Օսման աղայի հետ  
այստեղից գնացի:

—Ի՞նչ, դու մին Հաջի Բաբան ես, որ ինձ սափրում էր:

Օ՛ քո գալը բարի, տեղդ երկար ժամանակ դատարկ էր մնացել այստեղ. բարի ես եկել, բարի ես եկել:

Դուռն իր ծխնիների վրայ ճռճռալով բացուեց, և ահա մի կարձահասակ ծերունի իր լայն վարտիքներով կանգնեց մուտքի մէջ տեղում: Նրա ձեռքի ճրագի աղօտ լուսով մենք իսկոյն տեսանք, որ քարվանսարան լի էր վաճառականներով:

Էլ ժամանակ չտուինք: Մեզանից մէկն անմիջապէս յարձակուեց նրա վրայ, իսկ միւսներս ներս վազելով սկսեցինք մեր գործը: Թալանի գործի մէջ իմ ընկերները այնքան հըմուտ ու ճարպիկ էին, որ նրանք իսկոյն իմացան թէ ինչ տեղեր պիտի խուզարկել՝ ոսկի, արծաթ գտնելու համար Միքանի բոպէում նրանք սեփականացրին քարվանսրայի մէջ գըտնուող բոլոր ոսկին ու արծաթը, Բայց նրանք դրանով չէին բաւականանում. Նրանք նպատակ ունեին գերելու մի քանի հարուստ վաճառականներ, որպէսզի նրանց համար էլ ապագայում փրկանք ստանալով կատարեալ դարձնէին իրանց կողոպուարք Շուտով նրանց յաջողուեց ձերբակալել երեք հոգի, որոնց ձեռքերն ու ոտները կապելով դրին իրանց ձիերի վրայ և քըշեցին դէպի նախապէս նշանակած ձորը:

Քարվանսրայի ամեն մի անկիւնի հետ ես այնքան լաւ ծանօթ էի, որ գիտէի թէ որ սենեակում կանխիկ դրամ կար: Ես վազեցի մի սենեակ, որտեղ մի արկղ գտնելով, վերցրի ու փախայ: Նրա մէջ կար մի ծանր քսակ, որ ես շտապով դրի ծոցս. բայց մթութեան պատճառով ես չը կարողացայ ստուգել թէ ինչ դրամ էր—ոսկի, թէ արծաթ:

Հազիւ մենք վերջացրել էինք մեր գործը, որ մեծ իրաւանցում ընկաւ քաղաքի մէջ: Քարվանսրայի բնակիչները—վաճառականներ, ծառաներ, ուղտապաններ, ջորեպաններ և աւելածուներ—բոլորն էլ շփոթուելով վազեցին կտուրը: Մերձակայ բնակիչները խոնուեցին քարվանսրայի շուրջը. բայց ոչ ոք չգիտէր ինչ անել: Նրանք միայն աղաղակում էին՝ զարկեցէք, բռնեցէք, սպանեցէք. բայց ոչ ոք չէր վստահանում գործադրել այդ խօսքերը:

Մի քանի գնդակներ աննպատակ արձակուեցին օդի մէջ: Խաւարն ու ընդհանուր շփոթութիւնը մեզ նպաստաւոր լինելով մենք փախանք առանց վնասուելու: Աղմուկի ու խուզութեան ժամանակ ես մի բոպէ մտածեցի թագնուել մի անկիւնում, բայց յետոյ մտածեցի որ եթէ մարդիկ տեսնեն ինձ, առանց ինձանից բացատրութիւն լսելու հէնց տեղն ու տեղը կը սպանեն ինձ:

Դեռ այսպէս մտածում էի, երբ յանկարծ մէկն իր ձեռնք

ուսիս վրայ դրեց: Ետ նայելով տեսայ Ասլան Սուլթանին, որ սպառնաց իսկոյն սպանել ինձ, եթէ ես դաւաճանէի իմ խոստմանը:

Իմ հաւատարմութիւնն ու քաջութիւնը նրան ցոյց տալու համար ես իսկոյն յարձակուեցի մի պարսկի վրայ, որ էնց այդ բողէին վաղում էր մեր առջեկց, և գետին գորելով նրան՝ ասացի.

— Եթէ դու առանց ձայն հանելու անձնատուր չես լինի ինձ և չես գալ իմ ետեից, ես կը սատկացնեմ քեզ:

Խեղճ մարդը սկսեց իմ գթութիւնն հայցել, աղաղակելով.

— Ի սէր իմամ Հոռէյնի, ի սէր հօրդ, ի սէր Օմարի մօրուքի, աղաչում եմ, պաղատում եմ, ազատ թող ինձ:

Տարաբախտ մարդի ձայնից ես իսկոյն ճանաչեցի նրան նա հայրս էր:

Ես բաց թողի նրա մօրուքը որ պինդ բռնել էի: Մտածեցի չոգել նրա առջև, համրուրել նրա ձեռքը, ներողութիւն խնդրել, սակայն այդ անելով կեանքս վտանգի կ'ենթարկէի: Թիշ մտածելուց յետոյ ես սկսեցի այնպէս ձևացնել, որպէս թէ կուռում էի նրա հետ, և որպէսզի Ասլան Սուլթանին ցոյց տայի որ ես իբր թէ իրօք հարուածում էի նրան, ես սկսեցի ուժգին բուռնցըներ հասցնել մի համետի կողքին, որի վրայ ընկած էր հայրս: «Ա՛խ, եթէ Հաջի Բարան այստեղ լինէր, մրմնջում էր հայրս, նա չէր թոյլ տայ որ ինձ այսպէս անէին»: Այս խօսքերը այնպէս ազգեցին ինձ, որ ես իսկոյն բաց թողի նըրան և տաճկերէն լեզուով ասացի ինձ մօտ կանգնած մի քանի թիւրբմէններին, թէ՝ այս մարդը բոլորովին անպէտք է մեզ համար. սրանից բան չի դուրս գալ. սա մի խեղճ սափրիչ է:

Այս ասելով և առանց մի բոպէ սպասելու՝ հեծայ ձիս և քեցի քարվանսրայից դուրս, դէպի մեր ժամադրավայրը՝ այն ձորը, որտեղ տարուեցին երեք վաճառականները:

### ԳԼ. զ.

Թիւրբմէնների, երեք գերինների նւ քարվանսրայից տարած աւարի մասին:

Երբ մենք հասանք մեր ժամադրավայրը, իջանք մեր ձիեց և քիչ մասցինք այստեղ հանգստանալու: Մեր ընկերներից մէկը ճանապարհին գողացել էր մի գառ, որին մենք այստեղ խորովեցինք և քաղցած գայլերի պէս՝ մի բոպէում կանեցինք: Կշտանալուց յետոյ մենք նստանք ստուգելու մեր բերած գերինների և աւարի ինչ արժէք ունենալը: Գերիններից մէկը մի

յիսուն տարեկան բարձրահասակ, նիհար մարդ էր, սուր աշ-քերով, փոս ընկած այտերով և ցանցառ մօրուքով: Նրա շորե-րերը մետաքսից և շալից էին: Միւսը՝ մի միջահասակ, կար-միրերես մարդ էր որ իր հագուստով նմանում էր մի պետա-կան պաշտօնեայի: Երրորդը՝ մի պարարտ մարդ էր, կոպիտ դէմքով և կորովի մարմնով:

Մենք մեղ մօտ կանչեցինք երեքին էլ, ցանկանալով հարց ու փորձ անել նրանց՝ իրանց ով լինելու մասին: Ամենից ա-ռաջ բարձրահասակ, նիհար մարդը առաջ կանչուեց: Որովհետեւ մեր խմբի մէջ միակ պարսկագէտն ես էի, ինձ առաջարկուեց թարգմանի պաշտօն կատարել:

—Ո՞վ ես դու, հարցըրեց Ասլան Սուլթանը:

—Ես... ես, ասաց նա, ես... աղաջում եմ, որ ոչ ոք չեմ-միայն մի խեղճ մարդ եմ:

—Գործդդ ի՞նչ է:

—Ես բանաստեղծ եմ. դրանից աւելի ի՞նչ կարող եմ լինել:

—Բանաստեղծ, հարցըրեց մեզանից մէկը, բանաստեղծն ի՞նչ բանի համար է պէտք:

—Ո՞չինչ բանի համար, բարկութեամբ պատասխանեց Ասլան Սուլթանը. տասը թուման \*) էլ, ինչպէս երևում է, դուրս չէ գալու սրանից: Բանաստեղծները միշտ աղքատ են և ապրում են ուրիշների ծախքով: Ո՞վ արդեօք դուրս պիտի գայ սրա համար փրկանք տալու: Բայց եթէ դու աղքատ ես, դարձաւ նա բանաստեղծին, ապա նրանից քեզ այդ լաւ շո-քերը:

—Սրանք մի ձեռք պատւոյ զգեստի մի մասն է, որ վեր-ջերս շնորհեց ինձ Շիրազի իշխանը իրեր վարձատրութիւն մի գեղեցիկ ոտանաւորի համար, որ ես գրել էի:

Այս խօսքերի վրայ մենք հանեցինք նրա շորերը և հե-ռացըրինք նրան, բայց, իհարկէ, չ'ազատուեց գերութիւնից:

Ցետոյ եկաւ միւսը:

—Ո՞վ ես դու, հարցըրեց մեր պետը, գործդդ ի՞նչ է:

—Ես մի խեղճ դատաւոր եմ. հիշնչ չունեմ, աղքատ եմ:

—Խեղճ դատաւոր ես, աղքատ ես, ապա նրանեղից այն գեղեցիկ անկողինը: Յիշմաւ ես թէ դու նրանեղ էիր քնած: Այդու-շան-հայր», եթէ սուտ ասես, մենք քեզ կը սատկացնենք: Խոս-տովանիր որ դու հարուստ ես. դատաւորները բոլորն էլ հա-րուստ են:

\*) Մի թումանը այժմ հաւասար է մօտաւորապէս մէկ ու կէս բուրլու:

— Ես Գալագունի դատաւորն եմ. քաղաքապետը հրամայեց  
ինձ Սպահան գալ բանակցութիւն անելու մի գիւղի մասին:

— Ուրեմն զու փող ունես. որտե՞ղ է փողդ, ասա իսկոյն:

— Ոչ, ես փող չունեմ, մեր գիւղից հչինչ բան դուրս չեկաւ  
այս տարի: Գիւղացիներն ասում են որ այս տարի երաշտու-  
թիւնից և մորեխից իրանց դաշտերը փչացան:

— Ուրեմն այդ մարդը հչինչ արժէք չունի, ասաց մեղա-  
նից մէկը:

— Ի՞նչպէս չունի, բղաւեց Ասլան Սուլթանը: Եթէ սա մի  
լաւ դատաւոր է եղել, իր գիւղացիներն անպատճառ կ'աշխատեն  
աղատել սրան: Մենք առայժմ կը պահենք իրան: Գուցէ սա  
մի վաճառականից աւելի ևս արժէք ունենայ: Հիմա տեսնենք  
թէ ի՞նչ մարդ է այս երրորդը:

Ցեսոյ երրորդ գերին առաջ բերուեց, և Ասլան Սուլթանը  
հարցրեց նրանից:

— Ի՞նչ գործի տէր ես դու:

— Ես մի ֆէրրաշ<sup>\*)</sup> եմ, ասաց նա:

— Դու ֆերրաշ ես, հարցրին բոլորը:

— Ֆէրրաշ, օ՛ այդ մարդը սուս է ասում, ասաց մեղանից  
մէկը: Եթէ դա մի ֆէրրաշ է, ապա ի՞նչպէս էր քնել այն փա-  
ռաւոր անկողնում:

— Այդ անկողինն իմը չէր, դա իմ աղայինն էր:

— Մուտ է ասում, սուտ է ասում, աղաղակեցին բոլորը:  
Դա մի վաճառական է: Խոստովանուիր որ դու վաճառական  
ես, եթէ ոչ, այս ըովէիս գլուխդ կը կտրինք:

Խեղճ մարդը ամեն ջանք գործ գրեց համոզելու մեղ, որ  
ինքը մի ֆէրրաշ է, սակայն իզնէր: Ո՛չ որ չհաւատաց նրան:  
Աջ ու ձախ սկսեցին այնքան հարուածել նրան, մինչև նա  
ստիպուեց ակամայից պոռալ.

— Ես վաճառական եմ, վալլան, ես վաճառական եմ:

Մարդագորութեան գործի մէջ մեր խումբը, ի՞նչպէս երե-  
ւաց, անյաջողութեան էր հանդիպել. հետևապէս, բոլորն  
էլ վատ տրամադրութիւն ունէին, բոլորն էլ զայրացած էին:  
Ումանք մտածեցին բանաստեղծին ու ֆէրրաշին սպանել, իսկ  
դատաւորին պահել. ուրիշները ցանկանում էին ֆէրրաշին պա-  
հել որպէս ստրուկ և դատաւորին էլ այնպէս գերի պահել,  
մինչև որ մէկը դուս գար նրա համար փրկանք տալու. սակայն  
բոլորն էլ համաձայն էին բանաստեղծին սպանելու:

Գթալով խեղճ բանաստեղծին՝ ես ասացի.

\* ) Փէրրաշ՝ նշանակում է գորդ սփռող:

— Ի՞նչ յիմարութիւն էք ուզում անել. դուք ցանկանում էք սպանել մի բանաստեղծ: Ես ձեղ հաւատացնում եմ որ մի բանաստեղծ սպանելն աւելի մեծ յանցանք է, քան այն ոսկէ ձու ածող սագին, որի պատմութիւնը դուք բոլորդ էլ գիտէք: Միթէ դուք չգիտէք որ բանաստեղծները երբեմն շատ հարուստ են լինում, և եթէ ուզեն միշտ էլ կարող են հարուստ լինել: Նրանք իրանց հարստութիւնը տանում են իրանց գըլուխների մէջ: Միթէ դուք երբէք չէք լսած այն թագաւորի մասին, որը մի երևելի բանաստեղծի մի-մի ոսկի էր պարզմում իւրաքանչիւր մի տուն ոտանաւորի համար, որ նա շարադրում էր: Միթէ միենոյն բանը մեր ներկայ Շահի համար չէ խօսում, և ով գիտէ, գուցէ հէնց այս մարդը Շահի բանաստեղծն է:

— Եթէ այդպէս է, ասաց մեր ընկերներից մէկը, դէ ասա նրան այս ըոպէիս մի ոտանաւոր պատրաստէ մեզ համար, և եթէ նրա ոտանաւորի իւրաքանչիւր տունը մի-մի մսխալ \*) ոսկի չբերէ մեզ համար, մենք կը սատկացնենք նրան:

— Դէ, շուտ արա, ոտանաւոր շինիր, հրամայեցին ըոլորը միարերան, կարծելով թէ մի լաւ միջոց էին գտել ոսկի շինելու: Եթէ դու ուշացնես կամ չես անիլ, մենք քո լեզուն կը կտրենք:

Իվերջոյ վճռուեց որ երեք գերիներն էլ պահուեն, մինչև մենք բաժանէինք աւարը, և յետոյ վերադառնայինք Կիպր ջակի դաշտավայրը:

Ալան Սուլթանը հրամայեց մեզ մէջ տեղ դնել մեր գողացած բաները: Մի քանիսը սկսով ու արծաթով լի քսակներ հանեցին. ուրիշները՝ չիրուխների ոսկէ գլուխներ, արծաթէ ստոմաններ, մետաքսէ թիկնոցներ, շալեր և շատ ուրիշ թանկագին իրեր: Երբ հերթն ինձ հասաւ, ես մէջ տեղ դրի թումանների ամենածանր քսակը, որ մեծ գովասանութեան արժանացրեց ինձ:

— Ապրիս, ապրիս, Հաջի, ասացին բոլորը: Հաջին կատարեալ թիւրմէն է դառել: Ճշմարիտ որ Հաջին բոլորից աւելի քաջ է եղել:

Ալան Սուլթանն ամենից շատ գովեց ու խրախուսեց ինձ ասելով.

— Հաջի, զաւակս, երդուում եմ հօրս գլխով և իմ հոգովս, որ շատ քաջ ես եղել դու: Խոստանում եմ իմ գերուհիներից մէկին քեզ կնութեան տալ: Այսուհետեւ դու պիտի ապրես մեզ

\*) Մի մսխալը 24 ցորենաշափ է:

հետ և կ'ունաենաս մի առանձին վրան։ Քեզ կը տամ նաև 20  
ոչխար։ Հարսանիքդ շատ փառաւոր պիտի լինի։

Այս խօսքերը շատ խոր տպաւորութիւն թողին մտքիս  
վրայ և միայն աւելի սաստկացըրին իմ փախչելու տենչանքը։

Վերջապէս աւարը բաժանուեց, սակայն անիրաւները հչ  
մի դինար չտուին ինձ։ Զարմանալի չէ այս ես աղաչեցի,  
պաղատեցի որ մի բան ինձ տան, սակայն իգուր։ Շատ թա-  
խանձանքից յետոյ նրանք բարկացան ինձ վրայ և սպանա-  
ցին.

—Եթէ դու մի բառ էլ այդ բանի մասին խօսես, մենք  
կը սպանենք քեզ։

Ինձ մնաց գոհ մնալ իմ առաջուան ունեցած 50 գուկա-  
տով, այն ինչ իմ ընկերները հարստացան։ Այնուամենայնիւ  
նրանք սկսեցին կուել՝ մէկը միւսից աւելի բաժին ստանալու  
համար։ Նրանց կոփւը սաստկացաւ և պիտի վերջանար արիւն-  
հեղութեամբ, եթէ կուողներից մէկը չսաէր.

—Ինչու ենք մենք զուր տեղը կուում։ Մենք այստեղ մի  
դատաւոր ունենք. թող նա գայ և վերջ տայ մեր վիճաբանու-  
թեանը։

Գերի դատաւորը անմիջապէս մէջ տեղ բերուեց։ Նրան  
հրամայեցին արդարադատութիւն անել այն իրերի բաժանման  
վերաբերմամբ, որոնց մի մասն էլ հէնց իրանն էր։ Նա դատա-  
ւորութիւն արեց, բայց նրան չտվին աւարի հարիւրերորդը,  
ինչպէս սովորութիւն է տալ դատաւորներին։

ԳԼ. է.

Հաջի Բարայի բարեսրտութիւնը։ —Ասքէր բանաստեղծի պատմութիւնը։

Աւարը բաժանելուց յետոյ մենք ճանապարհուեցինք դէպի  
մեր բանակը։

Բանաստեղծի ընդհանուր տեսքը հէնց առաջին րոպէց  
գութ էր շարժել իմ սրտում։ Ինձ յաջողուեց ճանապարհին  
նրա վրայ հսկողի պաշտօն ստանձնել։ Այդ պաշտօնը մեծ ու-  
րախութիւն պատճառեց երկուսիս էլ, որովհետև մենք կարող  
կը լինէինք շատ բաներ խօսել միմիանց հետ առանց փախե-  
նալու, որ որևէ մէկը կը հասկանայ թէ մենք ինչ նիւթերի  
վրայ էինք խօսում։

Ես պատմեցի նրան իմ հվ և ինչ լինելը. յայտնեցի իմ  
փախչելու դիտաւորութիւնը, և խօսք տուի նրան իմ կարողու-  
թեան չափով օգտակար լինել նրան։ Նա էլ, առանց որևէ բան

թագցնելու, պատմեց ինձ իր և իր գործերի մասին։ Բանից դուրս եկաւ, որ նա Շահի բանաստեղծն էր, և կրում էր Մալքը էլ շահէրա \*) տիտղոսը։

Որպէսզի մեր ճանապարհորդութիւնը շատ ճանձրավի չը-լինէր, ես ինդրեցի նրանից պատմել ինձ իր պատմութիւնը, ինչպէս ես արդէն պատմել էի իմը։

Նա սկսեց այսպէս։

«Ես ծնուել իմ Քիրմանում, և անունս Ասքէր է։ Երկար ժամանակ հայրս այդ քաղաքի գլուխն էր։ Նա ապրում էր Աղա Մոհամէդ Շահի ժամանակ։ Շատ գաւառը ութիւններ եղան նը-րան պաշտօնանկ անելու, սակայն նա այնքան պատիւ ու յար-գանք էր վայելում թագաւորի մօտ և այնքան ազդեցիկ էր, որ իր թշնամիներն երբէք չկարողացան յաղթել նրան։

«Նա վերջապէս խաղաղութեամբ մեռաւ իր անկողնու մէջ, և ես ժառանգեցի 10,000 թուման, որ նա թողեց իր մա-հից յետ։

«Իմ պատմութեան օրերում ես անուանի էի իմ ժրա-ջանութեամբ, որ ցոյց էի տալիս ուսմանս մէջ։ Դեռ տասնեւց տարեկան չդառած՝ ես արդէն յայտնի էի իմ գեղեցիկ ձեռազ-ըրով։ Հաֆէզն ամբողջապէս անգիր էի, և այնքան հեշտութեամբ ոտանաւորներ էի գրում, որ մարդիկ զարմանում էին։

«Ես մի ոտանաւոր գրեցի Լէյլա և Մաջնունի \*\*) վրայ։ Ամեն մի հանդիսի մէջ, որուեղ ես հրաւիրում էի, ես միշտ երգում կամ արտասանում էի սիրուն կտորներ իմ յօրինած ոտանաւորներից։

«Այդ ժամանակներում Շահը պատերազմում էր Սաղեղ Խանի հետ, որ իրան թագաւոր էր հրատարակում։ Այս պա-տերազմում Շահը անձամբ հրամանատարութիւն էր անում։ Սաղեղ Խանը յաղթուեց, և ես անմիջապէս մի ոտանաւոր գը-րեցի, որի մէջ շատ գովասանեցի Շահին։ Պատերազմը նկարագը-րելիս՝ ես պատկերացնում էի, իբր թէ Ռոսթամը կանգնած է ամպի մէջ և տեսնելով Շահին քաջարար կուելիս՝ բացադան-չում է։ «Բախտաւոր եմ որ ես այսեղ վերևումն եմ, եթէ վա-րումը լինէի՝ չէի կարող ազատուել Շահի հարուածներից։ Իմ այս նկարագրութեան մասին Շահին պատմեցին, և նա հաճեցաւ շնորհել ինձ ամենաբարձր պատիւը, որ մի բանաստեղծ կարող է շահել։ այսինքն՝ բոլոր պետական մարդկանց ներկայութեամբ

\* ) նշանակում է՝ բանաստեղծների իշխան։

\*\*) Այս երկու անձանց սիրոյ մասին զանազան արևելցի գրողներ արդէն շատ բան են ասել։ Մաջնունը նկազմաւում է իբրև տիպար կամ օքինակ մի սի-րահարի, իսկ Լէյլան՝ իբրև ամենագեղեցիկն ու ամենակատարեալն իր սեռի մէջ։

բերանս ուսկով լցնել տուեց և նշանակեց ինձ արքունի բանաւստեղծ: Սրանից յետոյ ես միշտ ներկայ էի լինում պալատումը և ստիպուած էի մի բան գրել տեղի ունեցող դէպքերի մասին:

«Իմ խանդն ու եռանդը ապացուցանելու դիտաւորութեամբ ես մի օր այսպէս աղաջեցի Շահին.—«Մեզանից առաջ մեր մեծ բանաստեղծ Թէրդուախին զրել է Շահ նամէն (թագաւորաց պատմութիւն). սակայն որովհետև դուք Պարսկաստանի ըոլոր անցեալ թագաւորներից ամենամեծն էք համարւում, ուրեմն արժանի է, որ թոյլ տաք ինձ զրել ձեր թագաւորութեան պատմութիւնը, որին ես պիտի կոչեմ Շահին շահ նամէ», (թագաւորաց թագաւորի պատմութիւն):

«Շահը շնորհեց իր ընդունելութիւնը:

«Արքունի գանձապետն իմ թշնամիներից մէկն էր: Նա առանց մի իրաւացի պատճառ ունենալու աշխատեց զուր տեղը 12,000 թուման տուգանքի ենթարկել ինձ. սակայն Շահը իմանալով թոյլ չտուեց նրան իր նպատակին հասնելու:

«Մի օր, պալատականների ժողովում վիճաբանութեան առարկայ էր դարձել գազնեցի Մահմուլ Շահ՝ Թէրդուախին ցոյց տուած առատաձեռնութիւնը: Շահի ականջին հասցնելու համար թէ իմ կարծիքն ինչ էր այդ ինդրի վերաբերմամբ, ես ասացի:—«Մեր ներկայ Շահը իր առատաձեռնութեամբ հաւասար է Մահմուլ Շահին, հաւասար ասացի, ոչ, աւելի քան հաւասար, աւելի մեծ: Օ՛, ինչ մեծ պարզմներ է նա շնորհել ինձ»:

«Բոլոր ժողովականներն անհամբեր էին լսելու թէ ինչ-պէս և երբ էր մեր ներկայէն Շահը մեծ պարզմներ շնորհել ինձ: «Եախ և առաջ, ասացի ես, երբ հայրս մեռաւ, 10,000 թուման թողեց ինձ, և Շահը այնքան բարի գտնուեց, որ ինձ թոյլ տուեց ժառանգել այդ փողը: Եթէ նա կամենար, կարող կը լինէր զրկել ինձ այդ ժառանգութիւնից. բայց նա չկամցաւ և չարեց: Ահա ձեզ 10,000 թուման, որ Շահը պարզմեց ինձ: Յետոյ երբ արքունի գանձապետն ամեն ջանք գործ դրեց 12,000 թուման տուգանքի ենթարկել ինձ, նա՝ Շահը՝ չը թողեց, մինչդեռ եթէ կամենար, կը թողնէր: Այս էլ ձեզ 12,000 թուման: Մնացորդն էլ այն ապրուատն է, որ ես ունեցել եմ այն օրից՝ երբ նրա ծառայութեան մէջ մտայ: Ուրեմն, կեցցէ, կեցցէ Շահը, կեցցէ յաւիտեան. նրա շուրջը միշտ մեր գլխի վրայ լինի... Տայ Ալահն որ նա միշտ յաղթող լինի»:

«Այս խօսքերս Շահի ականջին հասան, և նա հաճեցաւ պարզմել ինձ մի ձեռք պատւոյ զգեստ, և մի արքունական-

Փիրմանով՝ բանաստեղծների իշխան \*) կոչեց ինձ։ Հստ սովորութեան, ես այդ Փիրմանը մի քանի օր գլխարկիս վրայ փակցրած ման և կայ։ Բոլոր իմ բարեկամները մեծ համակրանքով շնորհաւորեցին ինձ։ Յետոյ ես մի ոտանաւոր գրեցի, որ երկու նպատակի ծառայեց ինձ—մէկը՝ որ նրանով վրէժ առի արքունի գանձապետից, միւսը՝ որ միենյոյն ժամանակ նրան հաշտեցրի ինձ հետ։ Ամբողջ ոտանաւորը այնպիսի արաբական դժուար բառերով էի շարադրել որ ընթերցողը կամ լսողը կարծում էր թէ ես նրանով երկինքն էի հասցնում արքունի գանձապետին։ բայց դա սկզբից մինչև վերջ մի երգիծաբանութիւն էր, որով խայտառակում էի իմ թշնամուն, թէկ նա ուղղակի հրճում էր իմ գործածած բառերով։

«Ճիշտն ասած՝ այդ ոտանաւորն ես այնպիսի խոր մտքերով էի շարադրել, որ առանց իմ բացատրութեան՝ ոչ ոք չէր կարող հեշտութեամբ հասկանալ։ Ես մեծ հոչակ էի վայելում ոչ միայն իրեկ բանաստեղծ, այլ նաև իրեկ մի հանճարեղ մեքենարան... Իմ գիւտերից շատերը մեծ զարմանք էին պատճառում արքունիքում։ Ես մի տեսակ անիւ հնարեցի, որ միայն մի փոքրիկ մղումով կարող էր պտտուել յաւիտեանս յաւիտենից, առանց կանգ առնելու։

«Ես հնարեցի նաև զանազան տեսակ գունաւոր թղթեր ու կաղամարներ և պատրաստում էի կերպասագործութիւնն էլ յառաջ տանել, երբ Շահը արգելեց ինձ ասելով.—«Ասքէր, դու ուշադրութիւն դարձրու միմիայն քո բանաստեղծութիւններին։ Երբ ես կերպաս կամ որևէ զգեստացու ուզեմ, իմ վաճառականները կարող կը լինին Եւրոպայից բերել տալ ինձ համար։ Ես հնազանդեցի Շահին։ Նոր տարի օրը, երբ արքունիքի բոլոր ծառաներն ստիպուած են մի-մի ընծայ տալ թագաւորին, ես էլ իմ կողմից մի քչփորիկ ընծայեցի մի փոքրիկ տփի մէջ դրուած, և այնպիսի բաներ գրեցի այդ քչփորիկի մասին, որ երբ կարդացի արքունիքում, Շահը հրամայից պալատականներին համբուլել բերանս՝ կրածս նեղութեան համար։

«Ներջապէս, Ֆէրդուսին ինձ հետ համեմատած՝ մի ապուշ աւանակ էր համարւում։ Շահը միջոցներ չէր ինայում ինձ հարստացնելու։ Հստ սովորութեան, տարին մի անգամ Շահը մի ձեռք պատոյ զգեստ էր ուղարկում իր որդու համար, որ Թարսի նահանգապետն էր։ Վերջին անգամ ես նշանակուեցի այդ զգես-

\*) Սա Փաթէ Ալի Խան անունով արքունի բանաստեղծն է, որ մի շատ հանճարեղ և սիրելի անձնաւորութիւն էր և լաւ ծանօթ էր 1812 և 1813 թականներում Թէհրանում զանուող անզիացիներին։

աըն անձամբ ներկայացնելու Շիրազում մեծ պատիւ ու հարստութիւն ձեռք բերի և երբ այնտեղից վերադառնում էի, ճանապարհի վրայ ընկած գիւղերից էլ բաւական եկամուտ հասաւ ինձ. բայց աւաղ որ անցեալ գիշերուան դէպքը—ալան-թալանը զրկեց ինձ այդ ամենից»:

ԳԼ. ը.

Հաջի Բարիան փախչում է Թիւրքմէ ններից:—Թէ ի՞նչ է նշանակում՝ «տապակից դուքս ընկնել, կրակի մէջ ընկնել»:

Երբ Ապքէր բանաստեղծը վերջացրեց իր պատմութիւնը, ևս խօսք տուի ամեն ջանք գործ դնել աղատելու նրան իր գերութիւնից: «Դեռ պիտի համբերես, ասացի ես, որովհետեւ պէտք է հսաններով յաջողացնեմ թէ իմ և թէ քո փախուառը»: Բայց փախչել այն թիւրքմէնների ձեռքից, որոնք միշտ հսկում էին մեզ վրայ, և որոնք շատ աւելի լաւ ծանօթ էին ճանապարհներին, քան ես, խենթութիւն կը լինէր. բայց և այնպէս մենք պէտք է աշխատէինք օգտուել հէնց առաջին պատկհութիւնից:

Մենք շարունակեցինք մեր ճանապարհը, մինչև հասանք թէհրանից Մէշհէդ տանող ուղին: Այստեղ Ասլան Սուլթանը հրամայեց մեզ մի-երկու օր մնալ և գարանամուտ լինել անցնող կարաւանների վրայ յարձակուելու նպատակով:

Վերջապէս մի կարաւան հեռուից երևաց. բայց Ասլան Սուլթանը փոխարէն ուրախանալու՝ տիրեց: «Այդ կարաւան չէ, ասաց նա, նրանք շատ արագ են առաջ գալիս: Բացի դըրանից, զորինների կամ ուղտերի զանգակների ձայներ երբէք չեն լսում. նրանց բարձրացրած փոշին շատ թանձր է և կուտակուած: Ես նիղակներ եմ տեսնում: Օ՛ նրանք բոլորն էլ լաւ զինուած ձիաւորներ են: Նրանց առջևից գալիս են չորս եղանքի ձիեր: Ինձ թւում է որ մենք դրանց հետ խաղ չենք կարող անել»:

Եւ յիշաւի, մի քանի բոպէից յետոյ մենք պարզ տեսանք որ այդ կարաւան կարծուածը մի մեծ խումբ ձիաւորներ էին, որոնք ուղեկցում էին մի մեծ անձնաւորութեան—գուցէ մի նահնգապակետի, որ ճանապարհորդում էր առօք ու փառօք:

Սիրտս սկսեց բարախել. որովհետեւ ահա փախչելու պատեհութիւն էր ներկայանում: Ես մտածեցի առաջ գնալ դէպէր:

Նրանց և կամաւ ընկնել նրանց ձեռքը, իբրև աւազակ, Սակայն այդ բանն անելու համար ես պէտք է այնպէս ընթանայի, որ Ասլան Սուլթանը չկասկածէր ինձ: Թիշ մտածելուց յետոյ ես առաջարկեցի ընկերներիս մէկին առաջ գնալ դէպի մօտեցող խումբը և յարձակուել նրանց վրայ: Առանց սպասելու նըրքա համաձայնութեանը ես թուայ ձիուս վրայ, որ պատրաստ էր, և քշեցի առաջ: Ընկերս իսկոյն հետևեց ինձ, գուցէ ինձ արգելելու դիտաւորութեամբ, սակայն մի քանի ըովէում ես արդէն այնքան մօտեցել էի խմբին որ նրանցից մի քանի ձիաւորներ բաժանուելով իրանց ընկերներից՝ սրարշաւ առաջ եկան դէպի մեղ: Մենք ես դառանք իբր թէ փախչում ենք. սակայն ինչքան որ ընկերս մտրակում էր իր ձիուն, նոյնքան ես աշխատում էի իմի սանձը քաշել և այդպիսով ես ընկայ նրանց ձեռքը: Ինձ վայր գլորել ձիուս վրայից, զինաթափ անել, զրկել ինձ իմ 50 դուկատից, ածելիներից ու իմ ուրիշ իրերից՝ մի ըովէի գործ եղաւ նրանց համար: Ես աշխատեցի հաւատացնել նրանց որ ես երբէք փախչելու տրամադրութիւն չունէի. սակայն նրանք բնաւ չհաւատացին ինձ: Հէնց իմ շալով՝ նրանք պինդ կապեցին թևերս, և զլիխիս խփելով քարշ տուին ինձ իրանց իշխանաւորի մօտ, որի առջև կանգնած ժամանակ՝ ինձ բռնողները մի քանի բուռնցք զգակոթիս հասցնելով՝ հասկացըրին՝ ինձ, որ ես կանգնած էի մի շահզագէի (արքայորդու) առջև և պարտաւոր էի մինչև գետին խոնարհուել ի պատիւ նորին վսեմափայլութեան: Մի ըովէ շփոթուելուց յետոյ, ես յանկարծ յառաջ վազեցի և ինձ ձգեցի շահզագէի ոտների մօտ: Բռնելով նրա փէշերից, ասացի, Փէնահ ըէ շահզագէ (արքայորդու պաշտպանութիւնն եմ հայցում): Թիկնապահների մէկն առաջ եկաւ ինձ պատժելու. իմ համարձակութեան համար. սակայն շահզագէն արդելեց նրան, ասելով. «Դուք չը պիտի անսարգէք այս սրբազն օրէնքը», \*) և խոստացաւ պաշտպանել ինձ:

Պատուիրելով իր մարդկանց չը նեղացնել ինձ, շահզագէն հրամայեց ինձ համառօտ կերպով պատմել իմ պատմութիւնը, որը ես մի քանի խօսքերով վերջացրի: Ես յայտնեցի նաև, որ թիւրքմէնների ձեռքում գերի էին երեք պարսիկներ—մի ֆէրաշ, մի դատաւոր և Շահի բանաստեղծը: Յետոյ շատ խնդրե-

\*) Պարսկաստանում երբ մի յանցաւը բանում է մի իշխանաւորի փէշլց կամ նրա ձիերի ոտներին կապած շղթայից, կամ մանում է մի մէշիդ, գրանով նա, իբրև ընկնուած մարդ, պաշտպանութիւն է խնդրում և խսկապէս պաշտպանում է:

ցի որ ձիաւորներ ուղարկուէին թիւրքմէններին բռնելու և պարսիկներին ազատելու:

Հազիւ թէ վերջացրել էի խօսքս, երբ յանկարծ իմ ընկերին հալածող ձիաւորը վերադարձաւ (երբ ինձ բռնեցին, ձիաւորների մէկն էլ ձին քշեց իմ ընկերի ետևից) և հազար ու մի երդումներով հաւատացրեց շահզադէին թէ իբր թէ մէկ հազարից աւելի թիւրքմէններ գալիս են յարձակուելու իրանց լսմբի վրայ և թէ անհրաժեշտ էր որ իրանք անմիջապէս փախչէին այդտեղից:

Ես աշխատեցի հաւատացնել նրանց որ թիւրքմէնները քսանից աւելի չէին, սակայն իզուր: Ո՛չ ոք չհաւատաց ինձ: Լըտես ու խարերայ կոչեցին ինձ և սպառնացին սպանել ինձ, եթէ թիւրքմէնները յարձակուէին իրանց վրայ:

Խումբը յառաջ շարժուեց, շարունակ այս ու այն կողմը դիտելով սպասուած թշնամիններին տեսնելու նպատակով: Նրանք ձիս առան ինձանից և հրամայեցին նստել մի բարձուած ջորու վրայ: «Ահա մի նոր դժբախտութիւն», ասացի ես և նստելով ջորու վրայ՝ ընկայ խոր մոտածմունքի մէջ: Ես սաստիկ տիսրեցի իմ յիմարութեան վրայ: Տապակից դուրս ընկայ՝ կրակի, մէջ ընկայ: Ես անիծեցի իմ երեք հայրենակիցներին, որոնց ազատութեան համար մի քանի օր առաջ այնքան բաներ էի մոտածում:

«Դուք ձեզ մուսուլման էք կոչում, ասացի ես ինձ շրջապատող պարսիկներին. դուք շների զգացում էլ չունէք: Դուք աւելի վաստ էք քան քրիստոնեայ շները: Թիւրքմէնները ձեզ հետ համեմատած՝ օ նրանք մարդ են»:

Այս խօսքերս միայն ծիծաղ ու քրքիջ յարուցին, ուստի ես փորձեցի աղերսանքներով խօսել.

«Ի սէր իմամ Հոսէյնի, ի սէր Մարգարէին, ի սէր ձեր զաւակների արևելին, ինչու էք այսպէս վարւում ինձ պէս մի խեղճ մարդու հետ: Միթէ ես էլ ձեզ պէս մուսուլման չեմ... Ի՞նչ եմ արել որ այսքան ցաւ ու չարչարանք պիտի կըեմ: Ես ապաստան որոնեցի ձեր մէջ, սակայն դուք այժմ վարւում էք ինձ հետ իբրև մի թշնամու հետ»:

Այս աղերսանքներս էլ ապարդիւն անցան, միայն թէ Ալի Ղաթէր անունով մի ծեր ջորեպան, որ հէնց նոր պատրաստել էր իր դայլանը, ինձ հրաւիրելով ասաց.

—Որդիս, այս աշխարհուում ամեն բան Ալլահի ձեռքում է: Եթէ նա այս կենդանուն սպիտակ է ստեղծել (մատնանիշ անելով իր ջորուն), արդեօք կարմղ եմ ես սևացնել նրան: Խեղճ կենդանի, տեսնում ես, մի օր գարի է ուսում, մի օր փուշ: Կարմղ ենք մենք կուել ճակատագրի դէմ: Միիր, որդիս,

ծխիր դայլանը և ուրախ և շնորհակալ եղիր, որ քո ճակատագիրն աւելի վատ դրութեան մէջ չէ ձգել քեզ, Հաֆէզն ասում է. «Կեանքիդ իւրաքանչիւր ըոպէն քեզ համար մեծ շահ համարիր, որովհետեւ մվ է կարող քեզ ասել որ այս ինչ բանից ինչ պիտի դուրս գայ»:

Զորեպանի այս խօսքերը մի քիչ միիթարեցին ինձ, և երբ նա տեսաւ որ ես էլ Հափէզից բաւական բան գիտէի, սկսեց շատ համակրանքով ու բարեսրտութեամբ վերաբերուել դէպի ինձ: Նա խօստացաւ երբէք մի պատառ հաց չուտել առանց իմ մամնակցութեան:

Երբ վերջապէս իջևան հասանք, ես մտածեցի մի եղանակով ինձ շահզադէի ոտների մօտ ձգել և աղաչել նրան, որ գոնէ իմ 50 դուկատը ետ տրուէր ինձ: Շրջապատուած իր ծառաներով նա թեկ ընկած էր մի փափուկ բարձի վրայ և հանգըստանում էր: Ես կամաց մօտեցայ և առանց ժամանակ տալու որ ծառաներն ինձ մի կողմ վոնտէին, յանկարծ յառաջ վագեցի և գոչեցի.

—Արզի դարամ (աղերսարկու եմ):

Նա խկոյն հրամայեց ինձ մօտենալ իրան և աղաչել թէ ինչ էր իմ հայցուածքը: Ես գանգատուեցի թէ իր ձիաւորները շատ անիրաւութեամբ էին վարուել և զրկել էին ինձ իմ 50 դուկատից ու մի քանի իրերից: Նա խիստ բարկացաւ և խկոյն հրամայեց իր մօտ բերել ձիաւորներին: Երբ նրանք ներկայացան՝ նա ասաց.

—Է՛յ, շան տղերք, որտեղ է այս մարդու փողը:

—Մենք փող չենք առել սրանից, պատասխանեցին նըրանք միաձայն:

—Փող չէք ասել. հըմ, ես այս ըոպէիս կ'իմանամ: Կանչեցէք Փէրրաշներին, հրամայեց նա իր ծառաներին. սրանց ոտներին ճիպոտներ են հարկաւոր:

Մի ըոպէ դեռ չանցած՝ նրանց ոտները վեր ցցուեցին փալախկայի հանգոյցի մէջ, և նրանց վրայ տեղացին ճիպոտների այնքան խիստ հարուածներ, որ նրանք խօստովանուեցին թէ որտեղ էր փողը: 50 դուկատը դուրս բերուեց և յանձնուեց շահզադէին:

Նա համբեց փողը և ասաց.

—Դէ, թող հեռանան այդ յանցաւորները:

Ապա փողերը իր բարձի տակ դնելով դարձաւ դէպի ինձ.

—Դու էլ մուրախաս (ազատ) ես:

Ես մնացի շուարած, աչքերս չոած ու բերանս բաց. Մի